ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք.Երևան 08.09.2015թ.

Ո Ր Ո Շ Ու Մ

ԳԲԽ-31/15 բողոքը քննող հանձնաժողովի

ԳԲԽ-31/15 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) անունից և հիմք ընդունելով «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ի կողմից 21.08.2015թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված դիմումը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԳԲԽ-32/15 բողոքը քննող հանձնաժողովի կողմից քննվում է նույն ընթացակարգի վերաբերյալ «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ի կողմից 20.08.2015թ. ներկայացված բողոքում նշված նույն առերևույթ խախտումների հիմքով «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ի 21.08.2015թ. ներկայացրած բողոքը, «ՀՀԱՄ-ԲԸԱՀ-ԱՊՁԲ 15/06» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.08.2015թ. ժամը 16:00-ին տեղի ունեցած նիստի N 3 արձանագրությամբ կայացրած որոշումը դադարեցնելու, իսկ պայմանագիրը կնքված լինելու դեպքում, պայմանագիրը չեղյալ հայտարարելու, ինչպես նաև մինչև Խորհրդի կողմից վերջնական որոշում կայացնելը որպես միջանկյալ ընթացակարգ՝ ժամանակավոր միջոց կիրառելու՝ այն է պայմանագրի կնքումը կասեցնելու պահանջների մասին բողոքն առանց քննության թողնելու մասին.

Ո Ր Ո Շ Ե Ց

«ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ի 20.08.2015թ. ներկայացրած «ՀՀԱՄ-ԲԸԱՀ-ԱՊՁԲ 15/06» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.08.2015թ. ժամը 16:00-ին տեղի ունեցած նիստի N 3 արձանագրությամբ կայացրած որոշումը դադարեցնելու, իսկ պայմանագիրը կնքված լինելու դեպքում, պայմանագիրը չեղյալ հայտարարելու, ինչպես նաև մինչև Խորհրդի կողմից վերջնական որոշում կայացնելը որպես միջանկյալ ընթացակարգ՝ ժամանակավոր միջոց կիրառելու, այն է՝

պայմանագրի կնքումը կասեցնելու պահանջների մասին բողոքը թողնել առանց քննության:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Նախագահ՝ **Մնացականյան Արման**

Անդամներ՝ **Մնացականյան Հասմիկ**

Մնացականյան Արայիկ